ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Մշակվել է 14.02.2022թ

Հաստատվել է

ՀՀ ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը (ժ+ ժամ.,րոպե)	Պատասխանատու կատարող	Իրականացվող աշխատանքներ (միջոցառումներ)	Կատարողներ (ընդգրկվողներ)
1.	2.	3.	4.	5.	6.
I. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի խաղաղ պայմաններից ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման ժամանակ					
1.	Անձնակազմի ազդարարում	Մինչև 0.20	Դպրոցի տնօրեն, ՔՊ պետ	Համայնքի ղեկավարի կողմից ազդարարման մասին հրահանգ ստանալով համաձայն ազդարարման սխեմայի կազմակերպվում է դպրոցի անձնակազմի ազդարարում: Ազդարարման ավարտի մասին զեկուցում են համայնքի ղեկավարին	Դպրոցի անձնակազմ
2.	Անձնակազմի հավաք և խնդիրների առաջադրում	1.00-1.30	Դպրոցի տնօրեն, ՔՊ պետ	Անձնակազմը ներկայանում է աշխատանքային վայր: Դպրոցի տնօրենը ստուգում է ենթակա անձնակազմի հավաքի ընթացքը և իրավիճակին ծանոթանալու, դպրոցի խնդիրների և հետագա գործողությունների ճշգրտման նպատակով ներկայանում է համայնքի ղեկավարին, կամ անհնարինության դեպքում՝ խնդրադրվում նրա կողմից կապի միջոցներով: Դպրոցի տնօրենը ելնելով դպրոցի առջև դրած խնդիրներից՝ անցկացնում է խորհրդակցություն, որի ընթացքում դպրոցի ղեկավար կազմին տեղեկացնում է ընդհանուր իրավիճակի մասին, պարզաբանում դպրոցի, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության կազմավորումների խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձնում աշխատող անձնակազմի պաշտպանության կազմակերպման և դպրոցի աշխատանքային գործունեության կայունության ապահովման միջոցառումների իրականացման վրա	Դպրոցի անձնակազմ
3.	Շուրջօրյա հերթապահության կազմակերպում	Սկսած 2.00-ից	Դպրոցի ՔՊ պետի տեղակալ	Կազմվում է շուրջօրյա հերթապահության գրաֆիկ: Հերթափոխի պետ նշանակվում է պատասխանատու աշխատող դպրոցի ղեկավար կազմից: Իրականացվում է հեռախոսագրերի (կարգադրությունների, ազդանշանների) և այլ տեղեկատվության ընդունում, գրանցում և կատարման ապահովում:	Հերթապահ անձնակազմ
4.	Հիմնական ցուցանիշների ճշգրտում	Սկսած 03.00-ից	Դպրոցի ՔՊ պետի տեղակալ	Ուսումնասիրվում են դպրոցի <<Հիմնական ցուցանիշները>>, անհրաժեշտության դեպքում կատարում համապատասխան ճշգրտումներ և փոփոխությունների մասին տեղեկացնում են դպրոցի տնօրենին	Դպրոցի ղեկավար կազմ
5.	Դպրոցի տարածքում առկա պաշտպանական կառույցների պատրաստ վիճակի բերում	Սկսած 10.00-ից	Դպրոցի ՔՊ պետի տեղակալ	Ելնելով պատսպարվողների թվաքանակից՝ պաշտպանական կառույցները բերվում են պատրաստ վիճակի: Վերջիններիս բացակայության կամ անբավարարության դեպքում կազմավորումների ուժերով նախապատրաստվում են շենքի նկուղային, կիսանկուղային կամ առաջին հարկի փակ տարածքները	Կազմավորումների հրամանատարներ և անձնակազմ

6.	Պետպահուստից հատկացվող անհատական պաշտպանության միջոցների ընդունման և բաշխման նախապատրաստում	Սկսած 06.00-ից	Դպրոցի ՔՊ պետի տեղակալ	Վերադաս մարմնի հետ ճշգրտում է անհատական պաշտպանության միջոցներ ստանալու կարգը: Ճշգրտում է դպրոցում դրանց ընդունման և անձնակազմի բաշխման կարգը	Դպրոցի ղեկավար կազմ
7.	Դպրոցի քաղաքացիական պաշտպանության կազմավորումների կազմի ճշգրտում, անձնակազմով համալրում և գույքով ապահովում	Սկսած 06.00-ից	Դպրոցի ՔՊ պետի տեղակալ	Ճշգրտում է քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ցանկը, հաստիքացուցակներն ու անհրաժեշտ գույքով ապահովվածությունը, համալրվում է անձնակազմը և հագեցվում գույքով	Կազմավորումների հրամանատարներ և անձնակազմ
8.	Քաղաքացիական պաշտպանության հետախուզական կազմավորումների պատրաստականության բերում	Սկսած 06.00-ից	Դպրոցի ՔՊ պետի տեղակալ	Պատրաստականության է բերվում քաղաքացիական պաշտպանության հետախուզական կազմավորումը և դիտարկման կետը	Հետախուզական կազմավորման հրամանատար և անձնակազմ
9.	Կազմակերպության գործունեության կայունության ապահովմանն ուղղված միջոցառումների ճշգրտում և իրականացում, նյութատեխնիկական ապահովման միջոցների պահպանման կազմակերպում	Սկսած 08.00-ից	Դպրոցի ՔՊ պետի տեղակալ	Իրականացվում են կազմակերպության կայուն գործունեությունն ապահովող միջոցառումները: Արտադրության հումքի և պատրաստի արտադրանքի պահեստները հնարավորին սահմաններում հերմետիկացվում են, ապահովվում են դրանց օգտագործման և պահպանման արդյունավետ պայմանները: Կազմակերպության ղեկավարությունն անցնում է շուրջօրյա աշխատանքային ռեժիմի	Դպրոցի տնտեսվար
II. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում					
10.	<<Օդային տագնապ>> ազդանշանի դեպքում դպրոցի անձնակազմի գործողությունների կազմակերպում	անհապաղ (մինչև 00.15)	Դպրոցի տնօրեն, ՔՊ պետ	<<Օդային տագնապ>> ազդարարման ազդանշանը տրվում է կապի և ազդարարման բոլոր միջոցներով: Միացվում են դպրոցի տարածքում գտնվող զանգերը և 3 րոպե տևողությամբ տրվում է անընդհատ տատանվող ձայնային ազդանշան: Շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ 2-3 րոպե տևողությամբ տրվում է <<Օդային տագնապ>> տեքստային հաղորդագրություն: Ազդարարման սարքավորման բացակայության դեպքում ազդարարումը իրականացվում է հարվածելով սուր ձայն արձակող իրերին: Աշխատող անձնակազմը վերցնում է աշխատատեղում առկա անհատական պաշտպանության միջոցները, զբաղեցնում տվյալ տեղամասին ամրագրված (մոտակա) թաքստոցը և փակում դռները: Հնարավորության դեպքում դպրոցում առկա անհատական պաշտպանության միջոցները և ճառագայթային ու	Պատսպարվում է դպրոցի ողջ անձնակազմը: Խուճապի, անկարգությունների և պատսպարման ընթացքին խանգարող այլ երևույթների կանխման նպատակով գործում են հասարակական կարգի պահպանման,համայնքի թաքստոցների սպասարկման

				քիմիական հետախուզության սարքերը տեղափոխվում են թաքստոցներ: Իրականացվում է դպրոցի լրիվ (կամ մասնակի) լուսաքողարկում: Փակվում են գազի և ջրի մուտքի փականները	կազմավորումները:
11.	<<Օդային տագնապի ավարտ>> ազդանշանի դեպքում դպրոցի անձնակազմի գործողությունների կազմակերպում	Անհապաղ 01.00-04.00	Դպրոցի տնօրեն, ՔՊ պետ	Կապի պահպանված միջոցներով և սուրհանդակների ներգրավմամբ ազդանշանը հասցվում է բոլորին, այդ թվում՝ թաքստոցներում պատսպարվածներին, Ստուգվում և հնարավորության դեպքում վերականգնվում է կապը համայնքի ղեկավարության հետ, Ճշգրտվում և հնարավորության դեպքում վերականգնվում (համալրվում) են աշխատունակությունը պահպանած կազմավորումները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հետախուզական կազմավորումների վերականգնման վրա: Իրականացվում է դպրոցի տարածքի բազմակողմանի հետախուզությունը, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով թաքստոցներում պատսպարվածների, ինչպես նաև փլատակներում մնացածների հայտնաբերման, անվտանգ տարածք դուրսբերման և առաջին օգնության կազմակերպման վրա: ՈՒսումնասիրվում, ամփոփվում և համայնքի ղեկավարին տեղեկացվում է հակառակորդի գնդակոծման (ռմբակոծման) հետևանքով օբյեկտում ստեղծված իրավիճակի և մարդկային ու նյութական կորուստների մասին: Աշխատունակությունը պահպանած ՔՊ ուժերի միջոցով իրականացվում են փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում ներկայացվում է լրացուցիչ ուժերի և միջոցների պահանջարկի հայտ: ՈՒսումնասիրվում է դպրոցի գործունեության վերականգնման հնարավորություններն ու նպատակահարմարությունը, մշակվում և համայնքի ղեկավարությանն է ներկայացվում աշխատանքային գործունեության վերականգնման միջոցառումների պլան-ժամանակացույց:	